

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղալարիկ գյուղական համայնքի ղեկավարի
(2016 թվական)

2016թ.-ի ընթացքում Ղալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 136 դիմում, ինչպես նաև քանակոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 600 ավել տեղեկանք , ստացել 120 պաշտոնական նամակ և գրություն որ , քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ.

- 2016թ.-ի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանձաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները: Կատարվել է փողոցների բարեկարգում:

-Նախագինակոչային տարիքի պատանիներից 36-ը ներկայացել են Արմավիրի Զինկոմ, գինակոչը գտնվում է դրական ընթացքի մեջ.

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է համայնքի բնակիչներին պատկանող հողատեսքերի փոփոխություն , սեփականության իրավունքների վերականգնում և ձանաչում , հողամասերի չափազորման և սահմանների ճշտագրտման աշխատանքներ:

- Ցրտահարությունից կարկտահարությունից տուժած քաղաքացիներին տրվել է պարարտանյութ և դիզ. վառելիք:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ կառավարությունից կատարվել է և ջրի վարձի գիշումներ:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի և ոռոգման ջրագծերի վերանորոգման աշխատանքներ, խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին: Կատարվել է բնակչության տնտեսություններում անասունների:

հաշվառման աշխատանքներ և հաշվետվություն ներկայացվել վիճակագրական ծառայություն.

- 2016թ.-ի ընթացքում համայնքի բյուջեի եկամուտներն ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ - 4865,4 հազար դրամ,

բ) գույքահարկ – 5866,1 հազար դրամ,

գ) տեղական տուրք – 435,7 հազար դրամ,

դ) պաշտոնական դրամաշնորհ – 71626,0 հազար դրամ,

ե) Այլ ընթացիկ դրամաշնորհ – 995,5 հազար դրամ

զ) ընթացիկ սուբվենցիա - 533,5 հազար դրամ,

է) համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճար - 14,7 հազար դրամ

ը) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենք շինությունների օրինականացման վճար – 50,2 հազար դրամ,

թ) պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե - 2089,7 հազար դրամ.

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, համայնքի ղեկավարը աջակցել է աշնանացան ցորենի և գարնանացան գարու, ծիրանի և խաղողի քերթահավաքի աշխատանքներին.

ա) Իրականացվել է ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման գործնառնական հարթեցման աշխատանքներ – 985,0 հազար դրամ:

բ) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն – 4800,0:

գ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 2409,0 հազար դրամ,

դ) 5961,9 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար

ե) 8890,1 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար.


զ) համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 1397,1 հազար դրամ:

- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:

- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:

- Համայնքի 19 քաղաքնակարանային շենքերի կտուրներն ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Դավարիկ համայնքի ղեկավար



Պ. Սարգսյան